

A PM


3-2552<sub>2</sub>

3-2552<sub>2</sub>

«ՄՈՒՐՃ - ՄԱՆԳԱԼ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ. № 5

Մ. ԳԻԳՈՅԱՆ

# ԿՈԼԻՈԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ



22647

ԽՈՍՏՈՎ ԴՈՒԻ ՎՐԱ  
1980

Газет.-книжн. тип. Севкавполиграфгреста.  
Крайлит 29-93 Ростов н-Д. Заказ № 3362

ԿՈԼԽՈԶՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԱԿ  
ՈՒՂԻՇ ՃԱՆԱՊԱՐՀՆ ԵՆ

ԴԵՊԻ ԿՈԼԽՈԶՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր գյուղը յեղել ե շատ աղքատ ու հետամնաց:

Տեխնիկայի զարգացումը, գյուղատնտեսության մեջ բարդ ու թանգարժեք մեքենաներ գործածելը մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը մատչելի ե յեղել միմիայն խոշոր կալվածատերերին: Անհատ գյուղացիների մանր տնտեսություններն այդպիսի մեքենաներ գործածելու վոչ մի հնար չեն սւնեցել: Նրանց արտադրական միջոցներն են յեղել ձին ու յեղը և գյուղատնտեսական պարզ գործիքները:

Կմախքացած ձիու ու դանդաղաքայլ յեղի գյուղ ե յեղել մեր գյուղը մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Պարզ ե, վոր այդպիսի գործիքներով, այդպիսի հետամնաց տեխնիկական միջոցներով գյուղը չեր կարող առաջադիմել, չեր կարող գուրս դալ իր ծանր վիճակից:

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը գյուղը կարող եր դարձանալ ու զարգանաւմ եր կապիտալիստական գծով:

Կապիտալիստական զարգացումը բնորոշ եր նրանով, վոր գյուղում մեծամասնություն կազմող միջակները թեև դանդաղ, բայց հաստատ կերպով նվազում ելին յերկու կողմից. մի կողմից այդ կենտրոնական դիմոք նշնչան մասը հանդի-



պելով բարեհաջող պայմանների, ինչպիսիք են՝ առատ բերք, հաջող առևտուր և այլն, կարողանում եր անցնել կուլակների շարքը, իսկ մյուս կողմից միջակների զգալի մասն ընկնելով անբարեհաջող պայմանների մեջ—անբերը իություն, անասունների համաճարակ, հրդեհներ և այլն — կամաց կամաց չքաղորների և ապա բատրակների թիվն եր ավելացնում:

Այս պատկերն ամենին ծանոթ եւ: Ավելի պարզ լինելու համար, բերենք մի կենդանի պատկեր անցյալից: Գյուղացի Պետրոսը միջակ տնտեսության տեր եր: Նա ուներ 2 ձի, 1 զույգ յեզ, հարկավոր գործիքներ ու կարողանում եր իր լնտանիքի աշխատանքով ցանել 10 հեկտար հող: Ուներ նաև 1 կամ 2 կով, 5 կամ 10 վոչխար և կարծում եր, վոր իր քեփին քեֆ չի հասնի: Գլաւարկը ծուած, նա իրեն ապահովված ու անկախ մարդ եր հաշվում: Հանկարծ խեղճ մարդու գլխին անհաջողությունը անհաջողության հետեւից թափվեց: Ցեղաշտի պատճառով մի տարի արտերը բերք չտվին: Պետրոսը մնաց առանց հացի, նրա անասուններն — առանց կերի: Զմեռը մի կերպ անցկացնելու և դարունը նոր ցանք անելու համար, մեր Պետրոսը ծախեց իր մի ձին, վոչխարներն ու կովը: Նա արդեն անցավ չքավորների շարքը: Գարնանը նրա մյուս ձին նիւհարեց, ուժասպառ լինելով, չկարողացավ աշխատել ու սատկեց: Պետրոսը նոր բերքի վրա հույս գնելով, գնաց տզրուկաղայի մոտ ու նոր ձի գնելու համար տոկոսով 100 ռուբլի պարագ վեցըրեց:

Այդ որվանից խեղճ Պետրոսի որը սեացավ: Տզրուկաղան կամաց-կամաց Պետրոսի արյունը ծծել սկսեց: Գարնանային ու ամառային աշխատանքների տաք ժամանակ նա ձայն եր տալիս Պետրոսին ու «իմնդրում», վոր մի յերկու որ իր համար վար ու ցանք, կամ հունձ ու կալ անի:

Պետրոսը գլխակոր կատարում եր տզրուկ-աղայի «իմնդրը», իողնելով իր արտերն անմշակ:

Աշնանը, հունձից ու կալից հետո, Պետրոսը հաշիվ է ա-

Դում և տեսնում, վոր լավ որերը տղրուկ-աղայի համար աշխատելու պատճառով, իր արտերի մշակումն անկանոն եւ կատարել: Տարին թեև լավ տարի յեր, բերք կար, բայց անկանոն մշակման պատճառով, Պետրոսի արտերը միջակից ել ցածր բերք տվին: Հացահատիկների գինը ցածր ե, հացն ել ոիչ: Պարտքը տալու վոչ մի հնար չկա: Գնում ե տղրուկ-աղայի մոտ և խնդրում, վոր մուրհակը փոխի, նոր մուրհակ զրի: Մուրհակը փոխվում ե: Նիմնական պարտքի վրա ավելանում ե վաշխառուական տոկոսը և նոր մուրհակը առաջվա 100 ռուբլու փոխարեն գրվում ե 200 ռուբլու: Մի քանի տարուց հետո պարտքը նույն կարգով հասնում ե 500—600 ռուբ: Պետրոսի ամբողջ գույքն աճուրդով ծախվում ե դատարանի վորոշմամբ: Պետրոսն անցնում ե բատրակների շարքերը:

Յեվ ի՞նչքան շատ եյին Պետրոսները:

Կրկնում ենք, այս պատկերը բոլորիս ծանոթ ե: Դա մեր անցյալի հանրածանոթ պատկերներից ե:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն այդպես ե զարդացել գյուղը: Այդպիսի դեպքում բարդ, կատարելագործված ու թանգարժեք մեքենաներ գործածելու մասին միջակ գյուղացին, չքավորն ու բատրակը յերազել անգամ չեյին կարող:

Աղքատ ու հետամնաց եր մեր գյուղը:

Բայց յեկավ Հոկտեմբերը: Բանվոր դասակարգն աշխատավոր գյուղացու զինակցությամբ հաղթեց թե քաղաքի, թե գյուղի տղրուկ-աղաներին: Ազատազրեց աշխատանքն ամեն տեսակ շահագործումներից ու կեղեքումներից: Աշխատավոր գյուղացու համար ևս նոր կյանքի հեռանկարներ բացվեցին: Այն, ինչ անկարելի յեր առաջ, հիմա դարձավ իրագործելի: Տրակտորները, կոմբայններն և ուրիշ բարդ ու թանգ մեքենաները տղրուկ-աղաներին հարստացնելու միջոցից, Պետրոսներին կեղեքելու ու շահագործելու զենքից դարձան Պետրոսների կյանքը բարեկավելու, Պետրոսների աշխատանքը՝ թեթև-

վացնելու, գյուղի աղքատիկ ու հետամնաց կյանքը բարելավելու գենք ու գործիք:

Ներկա մոմենտը, մեր ԽՍՀՄ ժողովականության վերակառուցման ետապը, իր կոլխոզշինարարության հսկայական թափով հնարավոր ու իրադործելի յև դարձնում անցյալի յերազները:

Հնգամյա մեծ աշխատանքների ծրագիրը Հյուսիսային կովկասի համար նախագծել է 3 միլիոն հեկտար տարածություն՝ կոլխոզների ձեռքով մշակելու համար: Համկամկուսի (ը) Յերկրային կոմիտեն հանձն և առել կենտկոմի առջե, հետեապես ԽՍՀՄ ամբողջ բանվորության և աշխատավորության առջե, մինչև 1931 թիմս ամբողջ յերկրամասն ընդգրկել կոլխոզշինարարությամբ:

Այս հանձնարարությունը կատարելու համար պետք է լծվել աշխատանքի:

Աշխատանքի հաջողությունն ի միջի այլոց կախված է նուև նրանից, թե ի՞նչ չափով մենք հասկացել ենք կոլխոզների դերը, նրանց նշանակությունը դյուղի վերակառուցման գործում:

Այս նկատառութներով մենք ցանկացել ենք տալ կոլխոզների մասին անհրաժեշտ դիտելիքներ:

## ԻՆՉ Ե ԿՈԼԽՈԶԸ ՅԵՎ ԻՆՉ ՈԳՈՒՏ Ե ՏԱԼԻՄ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

Կոլխոզը տնտեսական այնպիսի մի ձե ե, վորը միացնում և անհատ գյուղացիներին, ընդհանուր ուժերով, ընդհանուր լծկաններով և մեքենաներով կատարելու այս կամ այն հողադրութական աշխատանքները:

Կոլխոզը համագործակցության այնպիսի մի ձե ե, վորը հնարավորություն և ստեղծում բարդ, թանգարժեք մեքենաների գործածման, հեշտացնում և թեթևացնում և աշխատանքը, նյութական և աշխատառ ուժերի ահազին խնայողություն և տալիս և բարձրացնում կոլխոզի անդամների տնտեսական դրությունը:

Խոսենք որինակներով.

Անհատ միջակ կամ չքավոր գյուղացին, վորն իր ընտանիքի ուժերով մշակում է 5—10 հեկտար հող, յերբեք չի կարող բարդ մեքենա գնել: Այդպիսի տնտեսության համար բարդ մեքենան նույնիսկ մնասակար է:

Մեքենայի, տրակտորի գործածությունն ոգտակար է այն ժամանակ, յերբ նա ունենա աշխատանքի լայն ասպարեզ, այսինքն յերբ նա վոչ թե 5—10 հեկտար տարածության վրա աշխատի, այլ առնվազն 200 հեկտարի վրա:

Մեքենաների գործածությունը՝ մեր այս որինակով հնարավոր է գառնում առնվազն 10—15 տնտեսությունների միացման ժամանակ:

Յերկրորդ որինակ: Մի գյուղում ապրում են 30 ծուխ չքավորներ: Մոտեցել ե ցանքի ժամանակը: Հայանի յե, վոր յեթե հողը ժամանակին չվարես, բերք չես ստանա: Այդ 30

ծխերից ամեն մեկը 1 ձի կամ 1 զույգ յեղ ունի Բայց զութանի համար հարկավոր ե առնվազն 6 ձի: Ի՞նչպես եյին այդ դրությունից գուրս գալիս մինչև այսոր. մի քանի անտեսություններ—4—5 ծխեր միանում եյին ու հերթով բոլորի համար 5—10 հեկտար վարում: Կյանքը ինքը դյուղացուն սահպում եր համագործակցության այդ հասարակ ձեռքին դիմել: Բայց համագործակցության այդ ձեն իր ոգտավետության հետ միաժամանակ ունի և պակաս կողմեր: Այդ ձեր բավարար կերպով չի ապահովում կանոնավոր աշխատանքը և շատ անգամ մեկի կամ մյուսի հողն անմշակ ե մնում: Պատահում ե, վոր մի որ մեկը ձին չի տալիս քաղաք, կամ աղորիք դնալու պատճառով. այդ որը մնացած ձիերը նույնպես չեն աշխատում: և այդ որը չի ոգտագործվում:

Հինգ ձիեր և 2—3 մարդ կորցնում են իրենց որը և վոչ մի ոգուտ չի ստացվում. բայց այս դեռ չարիքների փոքրագույնն ե:

Ավելի սովորական են Պետրոսի ու տղրուկ-աղայի դեպքերը: Թեև հիմա, խորհրդային իրավակարգում տղրուկ-աղաների ախորժակը սահմանափակում են խորհրդային որենքները, բայց և այսպես, մինչև վերջին տարիները—մինչև կոլխոզինարարության արագ ծավալումը—քիչ չեյին կուլակներին գերի դառնալու դեպքերը:

Կոլխոզն ե, վոր գալիս ե կանոնավորելու գյուղի աշխատանքը, թեթևացնելու գյուղացու դառն վիճակը և նրա տընտեսական վիճակը բարելավելու:

Բայց, վորպեսզի ավելի պարզ լինի կոլխոզի ոգտավետությունը, վերցնենք մի որինակ ևս.

Սուլթան-Սալա գյուղը (Մյամնիկյան ռայոն) 1929 թվին ցանել եր 4473 հեկտար. ուներ 540 լծկան միավոր և մոտ 500 հոգի աշխատանքի ընդունակ մարդ: Ամեն մի մարդուն ու լծկան ուժին ընկնում եր 8—8,5 հեկտար: Հողի մշակումը կատարվում եր չծրագրված կերպով, վորի հետևանքով արտե-

ըլլ լավ չեյին մշակվում ու բերքը հավասար եր մի հեկտարից միջին թվով 40—45 փթի, հետեւապես ամեն մի աշխատավորի և լծկան միավորի աշխատանքի արդյունքը հավասար եր 320-ից մինչև 382 փութ մթերքի: Այսպիսի արտադրողականությունն իհարկե բարձր համարել չի կարելի: Պարզ ե, վոր այսպիսի արտադրողականությունը յերբեք չի կարող բարձրացնել գյուղի տնտեսական վիճակը: Ի նկատի պիտի ունենալ նաև այն հանդամանքը, վոր մեր վերցրած գյուղն ուներ մի շարք կոլխոզներ, վորոնք ընդգրկում եյին տնտեսությունների մոտ 40 տոկոսը:

Հիմա յենթադրենք, վոր Ս.-Սալա գյուղը վերածվել ե մի ամերողական կոլխոզի, վորտեղ աշխատանքները կատարվում են ծրագրված կերպով: Ի՞նչպիսի փոփոխություններ կատացվեն, յեթե նույն իսկ կոլխոզը արակտորներ ու բարդ մեքենաներ չի գործածում: Ամեն մի լծկան միավոր իր լրիվ ոգտագործման դեպքում վարում, ցանում և կալսում ե 12—14 հեկտար: Հետեւապես, 4473 հեկտարը մշակելու համար կարիք կզգացվի 372—373 լծկան միավորի: Խնայվում ե 158 լծկան միավոր: Նույնը տեղի յե ունենում նաև աշխատավորների վերաբերյալ փոխանակ 500 հոգու, գործը գյուկս կգա 350 մարդով, կինայվի 150 մարդու աշխատանք: Արտադրողականությունը կբարձրանա—յեթե թողնենք բերքի նորման անփոփոխ—մինչև 480—675 փութ, կամ համարյա 50 տոկոսով:

Իսկ յեթե ընդունենք, վոր կոլխոզն իր տնտեսությունը կառուցել ե մեքենայական բազայի վրա (այդպես ել կլինի), այդ դեպքում նույն տարածությունը կարելի յե մշակել 20-30 տրակտորով և 100 մարդով: Ամեն մի աշխատավորի արտադրողականությունը կբարձրանա բերքի նույն անփոփոխ թվերով—1760 փութ, կամ 400 տոկոսից ել ավելի:

Այս պարզ հաշիվները մենք բավական ենք համարում նույնիսկ ամենահետամնաց գյուղացուն համոզելու, վոր կոլխոզը մեծ զարկ է առլիս գյուղատնտեսական աշխատանքի ար-

տաղբողականության բարձրացման, ազատում և միջոցներ և  
աշխատող ձեռքեր գյուղատնտեսության նոր ճյուղերին զարէ  
տալու, գյուղատնտեսության մթերքների մշակման արդյունա-  
բերությունները զարգացնելու համար:

Կոլխոզն իր անդամների աշխատանքի արդյունքները հա-  
մայնական սեփականություն և դարձնում, այսինքն այդ ար-  
դյունքից ոգտվում են բոլորը: Հարստացող և աղքատացողներ  
չկան: Կուլակներ և բատրակներ չկան:

Պետրոսի և տղրուկ-աղայի որինակը ցույց տվեց, թե  
ի՞նչպես Պետրոսների աշխատանքի արդյունքները հափշտա-  
կում ու յուրացնում եյին տղրուկ-աղաները, զցելով Պետրոս-  
ներին աղքատության ու սովի ճիրանները: Իսկ կոլխոզի որի-  
նակը ցույց ե տալիս, վոր աշխատանքի արդյունքներից ոգ-  
տըվում են կոլխոզի բոլոր անդամները: Կոլխոզում շահագոր-  
ծում ու կեղեքում չկա: Կոլխոզը սոցիալիզմի լայն ճանապա-  
հն եւ:

# Ի՞ՆՉՊԻՍԻ ԿՈԼԻՌԶՆԵՐ ԵՆ ՄԵԶ ՀԱՐԿԱՎՈՐ

Ֆուաջ, յերբ դեռ գյուղի «կենտրոնական դեմքը»—միջակը դանդաղ եր շարժվում դեպի կոլխոզ, յերբ դեռ չքավորն ու բատրակը կասկածով ու անվստահորեն եյին նայում կոլխոզների վրա, յերբ, վերջապես, յեղած սովորողներն ու կոլխոզները դեռ որինակ չեյին դարձել շրջապատող գյուղացիության համար,— այն ժամանակ կուսակցությունը բավականանում եր փոքրիկ կոլխոզներով, կոլխոզի հասարակ ձեմբրով։ Կուսակցությունը համբերատարությամբ սպասում եր, թե գյուղացին վերջ է վերջո կհամոզվի կոլխոզի առավելությունների մասին և լայն մասսայական ընույթ կտա կոլխոզշինարարության։ Այդ ժամանակվա կոլխոզները կազմվում եյին գլխավորապես չքավոր գյուղացիներից ու բատրակներից, ընդդրկում եյին 7—10 կամ ամենաշատը 20 մասենաշատը ամստեսություն, ձեռք եյին բերում 1 կամ 2 տրակտոր և ընդունում մեքենայական կամ հողի համայնական մշակման ընկերությունների կանոնադրությունը (ստաբ)։ Շատ դեպքերում այդ կոլխոզները համայնացրած վոչինչ չեյին ունենում։ Նույն իսկ տրակտորները ստացվում եյին այս կամ այն անդամի անունով։ Մի խոսքով՝ այդ ժամանակվա կոլխոզները կոլխոզշինարարության առաջին փորձնական քայլերը լինելով, դեռ կրում եյին իրենց վրա առաջին սատիճանի բոլոր նշանները։ Հետզհետե զարգանալով, մի կողմից միմիանց հետ ձուլվելով, մյուս կողմից ավելի բարդ ձեւերն ընդունելով, կոլխոզներն անցան կոլխոզշինարարության յերկրորդ սատիճանին—խուռացման ու համայնացման ասինանեին։

Յեթե առաջ գյուղացին մի անդամից իր գույքը համայնացնելուց զգուշանում եր, հիմա նա արդեն ինքն և առաջարկում գոնե լծկանների համայնացում։ «Իմ ձին» բառերը չըպետք ել լինեն, «մեր ձին» բառերն են մեզ հարկավոր—տհաթե ինչպիսի յեզրակացության ե արդեն հասել գյուղացին։ Յեկ մենք տեսնում ենք, վոր վերջին տարիներում ավելի լայն

ծավալ են ստանում արտելներն ու կոմունաները, վորակությունների համական ինվենտարի զգալի մասը, կամ ամբողջը համայնացված և արդեն,

Մեր, խորհրդային գյուղն արդեն բարձրացել է այդ առաջնանները. Մանր, թղուկային կոլխոզներ կազմելու շրջաններնց ենք. Անցել ենք նաև պարզ, մեքենայական, կամ հողի համայնական մշակման ընկերություններ կազմելու շրջանը. Այսորվա խնդիրը խուռ—ամբողջ գյուղի, նույնիսկ ամբողջ ռայոնի մասնաբով—կողխոզ կազմակերպելու և, փորտել հողագործական ինվենտարը (ձիեր, գոտ մեքենաներ ու դորժիքներ, կովեր և այլն) համայնացված եւ:

Հետևապես այն հարցին, թե ինչպիսի կոլխոզներ են մեզ հարկավոր, մենք կապատասխանենք, վոր մեզ հարկավոր են խուռ յեվ ավելի բարդ ձեվի կողխոզներ:

Այս չի նշանակում վոչ մի գեղքում, վոր մենք արգելում ենք մանր կամ պարզ ձեմ կողխոզներ կազմակերպելու. Մեքենայական ընկերություններ, ցանքորների խմբակներ, հողի համայնական մշակման ընկերություններ կազմելու վոչ մի դեպքում մեր աշխատանքի ծրագրից դուրս չպիտի թողնվեն. Բայց ուշադրության կենտրոնում պիտի լինեն խոշոր և բարդ ձեւ կողխոզներ կազմակերպելու խնդիքները:

Վորովհետեւ մենք արդեն ցույց տվինք (Ս.-Սալայի որինակով) խոշոր կողխոզների շահավետությունը, այստեղ այդ հարցի վրա մանրամասնորեն կանգ չենք առնելու. Կասենք միւայն, վոր խոշոր կողխոզը հնարավորություն և տալիս մի անգամից մեծ բանակությամբ ՏՐԱԿՏՈՐԻՆԵՐ յեվ ուրիշ բարդ մետնաներ ձեռք բերել, ՄԵՖԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ կայաններ կամ կալոննաներ սեղծել, նորոգման արինեստանոց բանալ, գյուղատնտեսության ունենալ, մետնաներն ավելի լրիվ ոգտագործել, գյուղատնտեսության նորանոր նյուղեր կազմակերպել, գյուղատնտեսության մթերքների մշակման արդյունաբերություններ զարգացնել յեվ այլն:

# ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈԼԻՈԶԻ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՑԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼ ՀԱՇԻՎՆԵՐԸ

Այս հարցը ներկայիս համար մեծ նշանակություն ունի:  
Շատ տեղերում կոլխոզի ներքին աշխատանքները կազմակերպելու, հաշիվները կանոնավորելու հարցերը բարդություններ են առաջ բերում և նույն իսկ կոլխոզի քայլայման պատճառ դառնում: Կոլխոզն այնպես պիտի կազմակերպի իր ներքին աշխատանքները, վոր նրա անդամները դժգոհ լինելու առիթ չունենան: Այդ նշանակում ե, վոր կոլխոզում աշխատանքի և վարձատրության միջն փորոշ հարաբերական չափ պիտի լինի: Ով շատ ե աշխատում, նա շատ ստանալու իրավունք պիտի ունենա և ընդհակառակը:

**Պարզենք որինակով.**

Ունենք մի կոլխոզ, վորտեղ 100 ծուխ միացել են: Այդ կոլխոզում կա 700 հոգի, վորոնցից 300-ը աշխատանքի ընդունակ են, իսկ մնացածները յերեխաններ են: Կան այնպիսի ծըլսեր, վորտեղ 6 հոգուց 4-ը աշխատանքի ընդունակ են, իսկ ուրիշ ծիսեր ել կան, վորտեղ 8 հոգուց միայն 2-ն են աշխատանքի ընդունակ: Այդպիսի կոլխոզում մինչև հիմա աշխատում եյին բոլոր աշխատանքի ընդունակները և արդյունքը հավասարապես բաժանում եյին շնչերի վրա. այդ պատճառով միշտ արտունչներ ու խոսակցություններ եյին լինում:

Ցենթաղբենք աշխատանքի կազմակերպման հետեւյալ ձեզ ամենից առաջ վորոշել են, վոր յերեխանները, վորոնց հողովովավում ե կոլխոզը, իրավունք ունեն ստանալ իրենց հասնող հողի կապալագինը (արենդյ) տեղական միջին գնով (8-10 սուբլի հեկտարը), Ցերկը աշխատանքի բոլոր տեսակները

զնահատվել են և ամեն մի աշխատանքի համար նրա կատարողները ստանում են սահմանված վճարը: Աշխատանքները ծանրության տեսակեաից բաժանված են տղամարդկանց, կանանց ու պատանիների մեջ և աշխատավորների ամեն մի կատեգորիա իր հերթին աշխատանքի պիտի դուրս գա, յեթե չկան հարգելի պատճառներ (հիվանդություն, ծննդաբերություն և այլն): Ցեթե մեկն աշխատանքի դուրս չի գալիս առանց հարգելի պատճառի (ծուլություն, գործաքում), նրա գեմ կողխողը ձեռք ե առնում զանազան միջոցներ (հանդիմանություն, տուգանք և նույն իսկ կոլխոզից հեռացներ): Աշխատանքի այս տեսակ կազմակերպումն այն առավելությունն ունի, վոր այս տեղ ավելորդ խոսակցությունների տեղիք չի լինում. «ինչու յես քո յերեխաների համար պիտի բանեմ» խոսքը միանգամայն վերանում ե: Մյուս կողմից ծուլության, գործաքումների և աշխատանքը կազմալուծող այլ յերեսույթների գեմ պայքարելու և աշխատանքային դիսցիպլինան բարձրացնելու պայմաններ են ստեղծվում:

Ցերորդ՝ ամեն մի անդամ ունի իր անձնական հաշիվը, վորտեղ հաշվի յե առնվում ամեն մի անդամի թե կոլխոզ մտցրած գույքի արժեքը, թե նրան հասանելիք աշխատավարձը, թե յերեխաների հողի կապալագինը: Հաշվի յեն առնվում նաև մթերքով կամ կանխիկ ստացած գումարները: Այնպես վոր, ամեն ամիս, նույնիսկ ամեն որ կոլխոզի ամեն մի անդամ կարող ե իմանալ, թե ինքն ի՞նչ ե աշխատել և ի՞նչքան ստանալիք ունի կոլխոզից:

Չորրորդ՝ կոլխոզը դեռ չի անցել մեքենայացման, այլ աշխատում ե այն ինվենտարով, վորը բերել են անդամները: Ամեն մի անդամի ինվենտարն ոգտագործելու հարցը նաև շատ խոսակցության տեղիք եր տալիս: Կային ասողներ, վոր կողխոզ մանող բոլոր գյուղացիք հավասար արժեք ունեցող ինվենտար պիտի ներմուծեն: Կային և ուրիշները, վորոնք ասում եյին, թե ամեն մի ինվենտար բանեցնելու համար առանձին

գին և հարկավոր նշանակել ու տերերին այդ գինը գնարել և այլն: Բոլոր այդ ձեռն ել անկարող եյին հարցը բավարար կերպով լուծել և վերջերս կոլխոզների անդամները յեկել են այն յեզրակացության, թե ինվենտարը հարկավոր և համայնացնել, դարձնել կոլխոզի սեփականություն, իսկ տերերին մի քանի տարիների ընթացքում վճարել արժեքը: Ամեն անդամի անձնական հաշվում գրում են նրա ներմուծած ինվենտարի արժեքը, վորը նա ստանում և 4-5 տարվա ընթացքում, վորոշ տոկոսներով:

Հինգերորդ՝ վորովհետեւ կոլխոզի կազմակերպումն ազատում ե միջոցների և աշխատող ձեռների վորոշ մասը, կոլխոզներում հարց եր բարձրանում, թե ի՞նչ պիտի անեն ազատ, աշխատանքի ընդունակ ձեռները: Հարց եր ծագում նաև, թե ով պիտի առաջին հերթին աշխատանքի գնա: Սկզբում նկատվում եյին վորոշ իննամիական մոտեցումներ: Նախագահը կամ վարչության անդամներն իրենց մոտիկ մարդկանց եյին ուղարկում աշխատանքի: Ինարկե այդ տեսակ իննամիական մոտեցումը կոլխոզի անդամների արդարացի դժգոհությունն եր առաջացնում: Կոլխոզն այդ հարցերն ել լուծել ե բավարար կերպով: Ամենից առաջ կոլխոզը կազմել ե աշխատանքի ընդունակ մարդկանց ցանկն այնպես, վոր ամեն մի ծխից մի մի աշխատող անպատճառ առաջին հերթին մտնում ե այդ ցանկի մեջ: Հետո կոլխոզը կազմակերպել ե գյուղատնտեսության հետևյալ ճյուղերը—վորոնք հիմա հնարավորություն են տալիս ողտագործել բոլոր ազատ ձեռները—բանջարանոց, կաթնատրնակառություն և թոշնաբուծություն: Պիտի ասել, վոր գյուղատնտեսական այս ճյուղերն առաջ գյուղություն չունեյին այդ գյուղում, բացի կաթնատնտեսությունից: Իսկ կաթնատնտեսությունն ել գտնվում եր սաղմային գրության մեջ:

Հիմա այդ նոր ճյուղերը, բացի այն, վոր հիմնականորեն լուծել են ազատ ձեռների իննդիքը, կոլխոզի նյութական դրությունը բարձրացնելու համար նոր աղբյուրներ են դարձել:

Յեթե առաջ մեր վերցրած կոլխոզի տարեկան յեկամուտը 50-60 հազար ռուբլի յեր, հիմա, նոր ճյուղերը կազմակերպելուց հետո, համարյա կրկնապատկվել ե:

Վեցերորդ: Հարց և ծագում, թե արդյոք կոլխոզի անդամները փայ պիտի մուծեն և յեթե պիտի մուծեն, բոլոր անդամները հավասար փայ են մուծելու, թե վոչ:

Հարցի առաջին մասին մենք պատասխանում ենք, վորայո, կոլխոզի բոլորը անդամներն առանց բացառության փայ պիտի մուծեն:

Իսկ յերկրորդ մասի պատասխանը լինելու յե այն, վոր փայը պիտի լինի դիֆֆերենցիալ, այսինքն բատրակների և չքավորների համար պիտի սահմանել մի փայ — յենթադրենք 50—100 ռուբ. միջակների համար — 300-500 ռուբլի և ունելորների համար — 700-1000 ռուբլի:

Այս փայերը նույնպես մտնում են ամեն մեկի անձնական հաշվի մեջ:

Բատրակների և չքավորների համար փայի մուծման ժամկետներ կարելի յե նշանակել, իսկ մյուս խավերը (միջակն ու ունեորը) միանվագ պիտի մուծեն: Բատրակներին և չքավորներին ոգնություն կարելի յե ցույց տալ նաև չքավորական ֆոնդից:

## Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԱՆԵԼ ԽՈՇՈՐ ԿՈԼԽՈԶՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խոշոր կոլխող ասելով, մենք հասկանում ենք ամբողջ գյուղի մասշտաբով (մի գյուղում մեկ կամ յերկու կոլխող) կազմակերպելը: Այս խմաստով խոշոր կոլխող կազմակերպելու համար հարկավոր ե, վոր գյուղի կուսրջիջը, կոմյերիտականներն ու չքավորական խմբակները, գյուղիտորհուրդն ու կոռպերատիվ կազմակերպությունը միասնական ֆրոնտով ձեռնարկեն հետեւյալ միջոցները.

Ամենից առաջ հողաշինարարական աշխատանքներն այնպես պիտի կատարել, վոր կուղակներն ստանան առանձին հողամաս, գյուղից հեռու, գյուղի հողերի ծայրամասերում, իսկ մուացած հողամասերը, վոր ամբողջական կոլեկտիվին են հատկացվում, բաժանվեն այդ գյուղում ընդունված սերմնափոխության սիստեմի համեմատ՝ հարկավոր մասերի: Յերկրորդ՝ հարկավոր ե նախ՝ գյուղի կազմակերպությունների ժողովներում, հետո չքավորների և ապա ընդհանուր ժողովներում անցկացնել մի կամ յերկու կոլխոզ կազմակերպելու վորոշումը (իսկ այն գյուղերում, վորտեղ արդեն գոյություն ունեն մանր կոլխոզներ, այդ կոլխոզների ժողովներում անցկացնել կոլխոզների ձուլման և մի խոշոր կոլխոզ կազմակերպելու վորոշումներ): Այդ վորոշումների մեջ հարկավոր ե անցկացնել այն միտքը, վոր կազմակերպվելիք կոլխոզում սկզբից և յետ համայնացվում ե հողագործական կենդանի և անկենդան ինվենտարը, վորի վորոշ մասը սկզբից իսկ հայտարարվում ե վորպես կոլխոզի անբաժան ֆոնդ: Այս կետը նշանակում ե, վոր կոլխոզի անդամները սկզբից իսկ հրաժարվում են լծկանների, գյուղատնտեսական գործիքների մեջ մերժանակերի սեփականությունից:

այդ բոլորը նրանք հանձնում են կոլխոզին, արժեքը 4-5 տարում ստանալու պայմանով՝ կոլխոզն այդ համայնացրած ինվենտարի վորոշ մասը, առենք 25-30, նույնիսկ 50 տոկոսը հայտարարում ե անբաժան ֆոնդ:

Ավելի պարզ լինելու համար վերցնենք իրեւ որինակն նույն Ս-Մալա գյուղը:

Այդ գյուղն, ինչպես գիտենք, ունի 540 լծկան միավոր՝ 54000 հազար սուրլու արժողությամբ, ունի նաև զանազան գուած, գործիքներ ու մեքենաներ՝ 30,000 սուրլու արժողությամբ: Իհարկե բոլոր ծխերի ունեցածը համարժեք չե, կան միջակ ծխեր, վորոնց ինվենտարն արժե 800-1000 սուրլի, կան միջակներ ու չքավորներ, վորոնց ինվենտարն արժե 300-500 սուրլի և այլն: Կոլխոզ կազմելու ժամանակ ամեն մեկի ինվենտարը գնահատվում է հատուկ հանձնաժողովի կողմից և ընդունվում է: Կոլխոզը նրա արժեքը վճարելու յե 4-5 տարվա ընթացքում: Յեթե այդ ժամանակվա ընթացքում կոլխոզի վորենե անդամ ցանկանա գուրս գալ կոլխոզից, նա իրավունք կունենա պահանջելու իր ներմուծած ինվենտարի արժեքի չըվճարված մասը (յեթե մեր հիշած անդամը ներմուծել եր 800 սուրլու ինվենտար, վորից նա նախ քան կոլխոզից դուրս գալու ստացել եր 200 սուրլի, այժմ նա իրավունք կունենա պահանջելու 600 սուրլի ևս): Մակայն կարող են այնպիսի դեպքեր պատճենել, վոր մեկ կամ 2 տարուց հետո, կոլխոզի շնորհիվ նյութապես բավական ապահովելուց հետո, կուլակային տարրերի ազգեցությամբ, կամ ուրիշ վորենե պատճառով, կոլխոզից հեռացվողների թիվը դժամի լինի և կոլխոզը քայլայվելու վատանգ տուաջանա: Այդ վտանգը կանխելու համար կոլխոզը հենց իր գյուղական առաջին որից պիտի սահմանի անբաժան ֆոնդի չափը: Մեր վերցրած որինակների հիման վրա, յեթե ինվենտարի 25-30 առկուն անբաժան ֆոնդ ե հայտարարված, կոլխոզից դուրս յեկող անդամը կստանա վոչ 600 ո., այլ 400 սուրլի: Նրա 200 սուրլու արժողության ինվենտարը

Հիմա կոլխոզին վորպես անբաժան ֆոնդ: Իսկ ամբողջ գյուղի ինվենտարի համայնացումից հետո կոլխոզը կունենա 20.000 ռուբլի անբաժան ֆոնդ, վորը կոլխոզի անդամներին շաղկապոյ, կոլխոզը քայլայումից աղահովող հզոր միջոց և հանդիպանում:

Յերրորդ՝ հիշյալ վորոշումներն ընդունելուց հետո գյուղի ընդհանուր ժողովում կարդացվում և ընդունվում է կոլխոզի կանոնադրությունը (ստաբ), վորը ընդունվելուց հետո ստորագրվում է ժողովի լիազորների կողմից և կոլխոզի անդամների անվանական ու գույքային ցուցակի հետ միասին, գյուղխորհրդի վավերացումից հետո ներկայացվում է ռայոնի հողբաժնին ի հաստատություն: Այստեղ տեղին է մի անգամ ևս ընդդժել մի կարեռը հանգամանք. դա կուլակներին կոլխոզ չընդունելու հարցն ե: Յեթե մինչև Համկոմկուսի (բ) կ. կ. նոյեմբերյան պլենումն այդ հարցի վերաբերյալ թեր ու դեմ կարծիքներ կային, հիմա կուլակներին կոլխոզ չընդունելու հարցը վճռված է վերջնականապես. Վոչ մի կուլակ, վոչ մի կուլակի վարդի կոլխոզի անդամ չի կարող լինել.

Այսպես ուրեմն, խոշոր կոլխոզ կազմակերպելու համար բացի հողաշինարարությունն այդ նօլատակին ծառայեցնելուց, հարկավոր ե կուլակներին բոլորովին մեկուսացնել, հարկավոր ե սկզբից և յետ ինվենտարը համայնացնել և հենց սկզբից իբրև անբաժան ֆոնդ, հատկացնել համայնացրած ինվենտարի արժեքի 25-30 տոկոսը: Այս ձեռնարկումները կոլխոզի գյուղաթյան հենց առաջին որերից կստեղծեն ամենաբարեհաջող պայմաններ նրա կայունության ու բարգավաճման համար:

# ԿԱԴՐԵՐԻ ՀԱՐՑԸ

Պարզ ե, վոր կոլխոզներ կազմակերպելը բավական չե, հարկավոր ե կոլխոզները ղեկավարել, նրանց աշխատանքներն անսխալ կազմակերպել և գործով ցույց տալ, վոր կոլխոզն անհատական տնտեսությունից ավելի բարձր ձև ե: Հարկավոր ե գործով ցույց տալ միջակ ու չքավոր գյուղացում, վոր կոլխոզը նրանց նյութական դրությունն անհամեմատ բարելավում ե, նրանց կուլտուրական մակարդակն ավելի յե բարձրացվում: Կոլխոզով ընդգրկված միջակն ու չքավորը պիտի իրոք համոզվեն, վոր սոցիալիստական զարգացման ուղին նրանց շահերի տեսակետից ավելի շահավետ ե, քան անհատական տնտեսությունը, քան կապիտալիստական զարգացման ուղին: Բայց այդ խնդիրները լուծելու համար հարկավոր են պատրաստված, ընդունակ և կուսակցության գիծն անշեղ կենսագործող մարդիկ: Կոլխոզները կպահանջեն կարող ղեկավարներ և այդ ղեկավարները պիտի գտնվեն: Կոլխոզները պիտի ստանան այդպիսի ղեկավարներ:

Կոլխոզշինարարությունը պահանջ կդնե տրակտորիստների, գյուղատնտեսների, անասնաբույժների, զոռտեխնիկների, բժիշկների, ուսուցիչների և այլ վորակյալ աշխատավորների մասին: Մենք պիտի գտնենք, պատրաստենք և տանք կոլխոզներին այդ կադրերը:

Կազմերի հարցը կոլխոզշինարարության հիմնական հարցերիցն ե: Քաղաքն ու գյուղը միասին պիտի լծվեն այդ հարցի լուծման: Քաղաքը պիտի տա բանվոր ղեկավարներ, բըժիշկներ, գյուղատնտեսներ: Գյուղն իր հերթին պիտի տա և պատրաստի իր միջից և ղեկավարներ և տրակտորիստներ և ուսուցիչներ և անասնաբույժներ և գյուղատնտեսներ և ուրիշ հարկավոր աշխատավորներ:

Այս հարցը—կաղըերի հարցը—իր ամբողջ լրջությամբ դիմած և մեր առջև և պահանջում ե լարված ուշադրություն իր հաջող լուծման համար։ Մի կողմից քանվոր դասակարգը մորիլիղացիայի յե յենթարկում իր լավագույն ներկայացուցիչներին ու գյուղ և ուղարկում մշտական աշխատանքի, մյուս կողմից քաղաքներում և գյուղերում զանազան կուրսեր են բացվում հարկավոր կաղըեր պատրաստելու համար։ Գյուղնայի կուրսերը պիտի ուղարկե բատրակ, չքավոր ու միջակ ակտիվիտաներին ու նրանցից կոփե, պատրաստե կոլլեգներ կառուցողների հզոր բանակ, Քաղաքն ու գյուղը միահամուռ ուժերով կոլլեգնարարության զուգընթաց պիտի զարկ տան կոլլեգնիկների կուլտուրական ու առողջապահական գործին, պիտի տան բժիշկներ և ուսուցիչներ։

Քաղաքն իր շեֆընկերությունների, շեֆքրիգադների միջոցով պիտի ամեն կերպ ոժանդակե գյուղի սոցիալիստական վերակառուցման մեծ գործին։

Կաղըեր պատրաստելու գործում մի անգամ ևս ուժեղ կերպով պիտի հայտնաբերվի բանվոր դասակարգի և գյուղացիության զինակցության անհրաժեշտությունն ու անպարտելիությունը։ Այս հարցում մի անգամ ևս պիտի հայտնաբերվի քաղաքի և գյուղի կապի նոր, արտադրական բնույթը։

# ԿՈԼԽՈԶՃԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կոլխոզճինարարության խնդիրները պահանջում են ահա-  
պին նյութական միջոցներ, ահազին քանակությամբ մեքենա-  
ներ, տրակառներ, կոմբայններ, պարարտանյութեր և այլն:  
Հարց ե ծագում, ի՞նչ աղբյուրներից կարելի յե ստանալ այդ  
միջոցները:

Պետք ե ասել, վոր տեղերում այս խնդրի վերաբերյալ բա-  
վական խառնաշփոթություն ե տիրում: Կան չափազանց վտան-  
գավոր ու վնասակար տրամադրություններ, վոր իբր թե կոլ-  
խոզի կազմակերպումը հնարավոր ե միայն պետական մի-  
ջոցներով:

Կուլակները և նրանց կողմանիցներն իրենք են ստեղծում  
և քաջալերում այդ տրամադրությունները: Նրանք լուրեր են  
տարածում, թե կոլխոզ մանելուց առաջ հարկավոր ե ծախել  
ձին, յեզը, մեքենաները և փողը զրպանը դնել: «Թող պետու-  
թյունը վարկ տա, տրակտոր ու մեքենա տա, սերմացու տա,  
տա, տա ու անվերջ տա». այսպիսի «լոգունգ» ե տվել կու-  
լակների «ագիտապրոպը»:

Դժբաղդաբար յերբեմն կուլակների—մեր դասակարգային  
թշնամիների—այս պրովակացիան հաջողվում ե: Յերբեմն մի-  
ջակներն ու նույնիսկ չքավորներն այդպես ել մտածում են:  
Հարկավոր ե մի լավ մտածել, թե վհրտեղ կարող ե մեզ հասց-  
նել կուլակների այդ պրովակացիան, մի լավ հասկանալ, թե  
կոլխոզճինարարության դեմ ուղղված կուլակների այդ տրա-  
մադրություններից ի՞նչ կստացվի:

Վերցնենք դարձյալ որինակ. յեթե Ս-Սալայի գյուղացիք  
յենթարկվեն այդ կուլակային պրովակացիային և նախ քան կոլ-

ևող մտնելը, ծախեն իրենց բոլոր ինվենտարը, վորը մեր նախորդ որինակով արժե 80.000 ռուբլի (և յեթե այդպես մտածեն ու գործեն բոլոր գյուղացիներն ել), ի՞նչպիսի դրություն կստեղծվի գ.-տնտեսության մեջ, ի՞նչքան պետական ոգնության կարիք կզգացվի։ Ա-Սալան ունի 300 ծուխ։ Ամեն մի 300 ծուխ կոլխոզ կազմակերպելու դեպքում պիտի պահանջե 80.000 ռուբլ։ Յեզ վորովինետև ԽՍՀՄ-ում կա 25 միլիոն ծուխ գյուղացիություն, Ա-Սալայի հաշվով ամբողջական կոլեկտիվացման համար կազմանջվի այնպիսի մի հակայական գումար, ինչպիսին ե 6.650 միլիոն ռուբլի։ Ի նկատի պիտի ունենալ, վոր այդ գումարը կպահանջվի գ.-տնտեսությունն իր այժմյան տեխնիկական բազայի վրա վերահստատելու համար, իսկ յեթե ավելացնենք մեքենայացման ու վերակառուցման խնդիրներն ել, այդ դեպքում պահանջվելիք գումարը կկրկնապատկվի։ Պարզ ե, վոր պետությունն ի վիճակի չի լինի այդպիսի գումարներ—մոտ 13-14 միլիարդ ռուբլի հատկացնել կոլեկտիվացման խնդիրը լուծելու համար։ Պարզ ե նաև, վոր կուլակները ստեղծելով և քաջալերելով այդ տրամադրությունները, ցանկանում են վիճեցնել կոլխոզինարարությունը։

Կոլխոզներ կազմակերպելու համար պահանջվելիք միջոցների գլխավոր մասը պիտի կազմեն այն միջոցները, վարոնիք արդեն կան գյուղամաս։ Ամեն մի չքավոր ու միջակ իր ունեցած ամբողջ կենդանի ու անկենդան ինվենտարը կոլխոզ պիտի մուծե ինչպես փայ և դեն շպրտե կուլակների փափոցը։ Տեղական կուսակցական, խորհրդային ու կոոպերատիվ կազմակերպությունների պարտականությունն ե պայքարել կուլակների նման յելույթների ու արամադրությունների դեմ, համախմբել բատրակներին, չքավորներին ու միջակներին այդպայքարի շուրջը։

Կոլխոզինարարությունը չպիտի իջեցնի գյուղատնտեսության մեջ գործածվող ինվենտարի արժեքը, այլ ընդհակառակը, պիտի բարձրացնի։ Կոլեկտիվացման կենտրոնական խըն-

դիրն եւ լինելու գյուղի մեքենայացումը, իսկ այդ նշանակում եւ ամեն մի շնչին համսող ինվենտարի արժեքը բարձրացնել, Մեր վերցրած որինակով՝ Ս.-Սալայի ամեն մի շնչին համսում եւ 40 ռուբլու ինվենտար, վորն իհարկե չափազանց քիչ եւ գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականությունը բարձրացնելու, հետեապես գյուղացու նյութական դրությունը բարելավելու տեսակետից։ Կոլեկտիվացումը պիտի կարողանանոր զարկ, նոր թափ տալ գյուղին հիշյալ ուղղությամբ։ Իսկ այդ նշանակում եւ, վոր կոլեկտիվացման ինդիքը յեղած ինվենտարը պահպանելով չի լուծվում։ Այդ նշանակում եւ, վոր պետությունն ել իր հերթին միջոցներ պիտի հատկացնե։ Յեզ այս տարի պետությունն իրոք բաց եւ թողնելու 4,300 միլ. ռուբ. վարկ ԽՍՀՄ մասշտաբով և 109 միլիոն ռուբլի—Հյուսիսային նույնական համար։

Սակայն բավական չեւ ինվենտարի արժեքը բարձրացնելու իննդիքը լուծելի հարկավոր և միջոցների ավելի ռացիոնալ ուղագործում։ Ս.-Սալայի որինակը ցույց տվեց, վոր կոլեկտիվացումն իր առաջին իսկ քայլերից միջոցներ եւ ազատում (540 լծկան միավորի փոխարեն 372 լծկան միավոր)։ Այդ խնայողությունների ռացիոնալ գործադրությունը իննդիքի կարևորագույն կողմն եւ կազմում։ Կոլեկտիվացման շնորհիվ ստացված բոլոր իննայողություններն առաջին հերթին պետք եւ ուղղել տրակտորներ և ուրիշ բարդ մեքենաներ ձեռք բերելու համար կանխավճար մտցնելու գծով։ Խնայողությունները պիտի ոգնեն գ.-անտեսական աշխատանքի միջոցների վերանորոգման, գ.-տնտեսության մեջ նոր մեքենայական բազա մտցնելու համար։ Կոլեկտիվացման առաջին քայլերն այս ուղղությամբ պիտի լինեն։ Յեզ յերբ մենք գ.-անտեսության գլխավոր ճյուղը—հողագործությունը մեքենայացնենք, այն ժամանակ նորանոր խնայողությունների, նորանոր ճյուղեր կազմակերպելու կամ յեղածները կատարելագործելու լայն հնարավորություններ կստանանք։

Կոլեկտիվացման համար պահանջվելիք միջոցների գլխավոր մասը գյուղումն եւ նա ցիր ու ցան յեղած, մանր, անհատական միջակ ու չքավոր գյուղացիների մոտն եւ Հավաքել, համայնացնել ու ռացիոնալ կերպով ոգտագործել այդ միջոցները—ահա թե ինչումն ե խնդրի «ուղն ու ծուծը»:

---

## ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄՆ ՈՒ ՄԵՔԵՆԱՑԱՑՈՒՄԸ

Կոլեկտիվացումը հնարավոր և դարձնում բարդ ու թանգարժեք մեքենաների գործածությունը, ինչ վոր անկարելի յէ անհատ տնտեսություների համար։ Իսկ մեքենաների գործածությունը, ինչպես արդեն գիտենք, խնայում և ահազին նյութական միջոցներ և աշխատանք։

Ս.-Սալայի որինակը մենք կարող ենք ավելի լայնացնել և կտեսնենք, վոր Հյուսիսային Կովկասի մասշտաբով անցկացված մեքենայացումը մեզ կտա թե նյութական, թե աշխատանքի ահազին խնայողություն։ Յերկրամասի համար պահանջվող 156,500 ձիու փոխարեն (յենթադրվում և ցանքսերի տարածութ. 1250 հազար հեկ.) կպահանջվեն (ամբողջական կոլեկտիվացման ժամանակ) 61 հազար տրակտորներ և 300 հազար աշխատող ձեռների փոխարեն—120 հազար։ Մեքենայացումը տալիս է մեզ ահազին խնայողություն, վորովհետեւ 1220 ձիերի վրա ծախսվող 19,300 հազար ռուբու փոխարեն (խոտ, դարի յամ հաճար, կերեր և այլն) ամեն մի ձիու կերի վրա կծախսենք 120 ռ. տարեկան, չհաշվելով ձիուն խնամելու ծախսը։ Մենք տրակտորների վրա կծախսենք 12 միլիոն ռուբլի (նավթ, նորոգում, նոր մասեր և այլն—ամեն մի տրակտորի վրա 200 ռ. տարեկան)։ Ամեն մի հեկտարի մշակումը ձիով մշակելու ժամանակ հավասար է 16 ռուբլու, իսկ տրակտորով մշակելու ժամանակ—10 ռուբլու, վորովհետեւ նույն Ս.-Սալայի որինակը ցույց է տալիս, վոր 1 ձին և 2 մարդը տրավա ընթացքում մշակում են (զլատավորապես վարում ու ցանում) վոչ ավելի 8 հեկտարից, մինչդեռ 1 տրակտորն ու 2 մարդը կարող են միշտ թվով 200 հեկտարից ել ավելի հող մշակել։

Իսկ վերև բերած հաշիվներից դժվար չի լինի պարզել,

վոր հողի մշակումն անհամեմատ քիչ ծախս ե պահանջում մեքենայացման ժամանակ, քան հին ձեռվ, ձիերով կամ յեզներով մշակելու ժամանակ:

Թյուրիմացություններից խուսափելու համար, հարկավոր ե այստեղ մի դիտողություն անել: Մենք միջոցների աղբյուրների մասին խոսելիս այն միտքը արտահայտեցինք, թե կուլտիվացումն ու մեքենայացումը յեղած միջոցներով չեն կարող բավականանալ և կպահանջեն նորանոր միջոցներ, վորոնց քանակն արդեն յեղած միջոցներից պակաս չի լինելու: Կարող ե պատահել, վոր իհարցնողներ լինեն, թե այդ բնչպես ե, վոր մի կողմից կոլեկտիվացումն ավելի միջոցներ ե պահանջում, իսկ մյուս կողմից խնայողություններ ե տալիս: Կարծես այստեղ հակասություններ կան: Յեկ իսկապես, առաջին հայացքից այդպես ել թվում ե: Բայց միմիրայն թվում ե, վորովհետեւ այստեղ վոչ մի հակասություն չկա:

Մեքենայացումը նշանակում ե, վոր մենք գյուղատնտեսության մեջ մտցնում ենք նոր տեխնիկա, թանգարժեք մեքենաներ, այդ մեքենաների համար բաց ենք անում նավթի բաղաներ, նորոգման արհեստանոցներ, պատրաստում ենք նոր կադրեր (այսինքն սովորեցնում ենք գյուղի բատրակ-չքավոր ու միջակ խավերին մեքենաների վրա աշխատել), կառուցում ենք մեքենաների համար սրաներ—և ուրիշ մի շաբթ աշխատանքներ, վորոնք պահանջում են նոր գումարներ, նոր ներդրումներ: Միննույն ժամանակ գյուղատնտեսական աշխատանքները պիտի կատարվեն իրենց հերթին և նորանոր ճյուղեր (կամ յեղածները ավելի լայն) պիտի կազմակերպվեն: Հարկավոր կինք նոր շինություններ կառուցել համայնացրած անասնաբուծության համար (որինակ՝ գոմեր, պանրա-յուղագործարաններ), այգեգործության համար ծառեր տնկել և այլն:

Պարզ ե, վոր այդ բոլորն ահազին նոր գրամ ե պահանջում:

Մյուս կողմից մեքենաների ներմուծումը բարձրացնում ե աշխատանքի արտադրողականությունը, ազատում ե աշխատող

ձեռներ և վորոշ միջոցներ ու այդպիսով տալիս ե ահապին խնայողություններ, վորոնք պետական վարկերի հետ միասին հնարավորություն կտան անտեսությունն ավելի բարձր հիմքերի վրա դնել, աշխատավոր գյուղացիության նյութական դրությունը հիմնականորեն բարելավել:

**Մեքենայացումը**—տրակտորներ, կոմբայններ, տրակտորին հարմարեցրած գործիքներ և մեքենաներ ներմուծելը—կողեւկտիվացման հետ սերտ կերպով կաված են: **Մեկը** մյուսին լրացնում ե:

Կոլխոզը հեշտացնում, հնարավոր ե դարձնում բարդ մեքենաների գործածումը չքավոր ու միջակ աշխատավոր գյուղացու համար, իսկ մեքենան արագացնում ե գյուղատնտեսության վերելքը, արագացնում ե գյուղացու նյութական ու կոլտուրական մակարդակի բարձրացումը և վոչնչացնում գյուղի ու քաղաքի միջև յեղած զանազանությունը:

**Մեքենաները** գյուղ ներմուծելու պրոցեսով գյուղի ելեքտրոֆիկացիան արագացնող խթանն ե, վորովհետև մեքենաների շնորհիվ ստացվող խնայողություններն ու ազատ ձեռները հիմք են դառնալու գյուղատնտեսական մթերքների մշակման արդյունաբերական ձեռնարկներ կազմակերպելուն, իսկ վերջիններն ելեկտրական ուժի մեծ պահանջ կդնեն և ելեկտրական կայաններ կառուցելու դրդապատճառ կդառնան:

Խավար ու աղքատ գյուղը մեքենաների շնորհիվ կստանա լույս և գուրս կգա դարավոր աղքատությունից:

Փայլուն ե կողեկտիվացման հեռանկարը:

Փայլուն ե մեքենայացված գյուղի ապագան:

Բայց այդ փայլուն ապագայի ճանապարհին կան և դրժարություններ:

Այդ գժվարություններից մեկն ել մեքենաների մատակարարությունն ե: Այսոր դեռ ԽՍՀՄ-ը չունի պահանջվելիք թվով տրակտորներ, կոմբայններ, տրակտորներին հարմարեցրած մեքենաներ և գործիքներ: **Մեր** դասակարգային թշնամիները—

Կուկակներն ու կղերականները — մեքենաների սղությունը, ինչպես նաև ուրիշ գժվարությունները, կուզենան ոգտագործել եղոլխողինարարության դեմ պայքարելու համար:

— Վոր կոլխոզ են կազմում, թող տրակտորներ տան:

— Առանց տրակտորի ի՞նչ կոլխոզ:

Այս և նման բացականչություններ անպայման տեղի կունենան գյուղում, կուկակների և նրանց ձայնակիցների կողմից:

Մենք պատրաստ պիտի լինենք այդպիսի յելույթներին:

Բայց, պայքարում հաղթելու համար պետք է զինված լինել և իմանալ, թե վո՞ր գեպքում ի՞նչ զենք գործածել:

Կուկակային տարրերի այդ յելույթների դեմ պայքարելու ամենագործնական միջոցն եւ մեքենաների արտադրությունն արագցնելու: Հայտնի յեւ, վոր խորհրդային կառավարությունը ձեռնարկել եւ արդեն տրակտորների գործարանների կառուցման: Ստալինգրադում, Խարկովում և Զելյարինսկում կառուցվում են տրակտորներ պատրաստելու հսկայական գործարաններ:

Ռոստովում, Ռուալում և Սիբիրում կառուցվում են գյուղատնտեսական մեքենաներ արտադրող գործարաններ, վորոնչ կոլեկտիվացող գյուղին պիտի տան կոմբայններ, տրակտորին հարմարեցված մեքենաներ և գործիքներ: Մնում ե, վոր մենք ել չքննենք, ձեռներս ծալած չնստենք, այլ ոգնենք կառավարության այդ գործարանների կառուցման գործում: Հիմնիկվանից մեքենաների համար կանխավճար մտցնել, ավելի յեռանդուն մասնակցել պետական փոխառությունների տարածման (մասնավորապես ինդուստրացման Յ-ըդ փոխառության) — ահա թե ինչ միջոցներով կարելի յեւ ոգնել կառավարության և հարվածել մեր դասակարգային թշնամիներին:

Իսկ մինչ այդ, մինչ մեքենաների արտադրումը, կոլեկտիվացման աշխատանքներին լծվել, ռացիոնալ կերպով ոգտագործել յեղած լծկան ուժերն ու մեքենաները, կազմակերպել

աշխատանքը ծրագրած կերպով, դեն շպրտել ծուլությունն ու դանդաղկոտությունը, զարկ տալ անասնաբուծության, անցնել գյուղատնտեսի ցուցմունքով հողի մշակման նոր ու գիտական ձևերին (բազմուղաշտյան սիստեմ, արհեստական պարարտացում), զարկ տալ այգեգործության, ծխախոտագործության, թռչնաբուծության, մեղվարտուծության և այլն և այլն:

Այսպիսով մենք գործնականորեն կմոտեցնենք սոցիալա-  
տական կարգերը, մեր բարեկեցության ու յերջանկության  
որերը և արժատից կառկենք կասվիտակիստական կարգերը, հիմ-  
քից կքանդենք կուլաների, տերտերների, նեղմանների և այլ  
պարագիտաների աշխարհը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



220035574

8552

(15k)

ԳԻՆՆԵ Ե 20 ԿՈՊ.

A II  
35574